

ք.Եղեգնաձոր

01.03.2018թ.

Վայոց ձորի գոհված կամ հաշմանդամ դարձած զին. ծառայողների ընտանիքների բնակարանային պայմանները ուսումնասիրելու նպատակով ստեղծված մարզային հանձնաժողովի նիստ

Նիստի աշխատանքներին մասնակցում են՝ փոխմարզպետ, հանձնաժողովի նախագահ Մ.Հարությունյանը և հանձնաժողովի անդամները :

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ


1. ՀՀ պաշտպանության նախարարության 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող 6 նախկին զիծառայողների անօթևան ընտանիքների գործերի ուսումնասիրություն:

Լսեցին՝ հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող անօթևան 6 նախկին զիծառայողների՝ Արման Մարտիկի Մուրադյանի, Կարապետ Գարսևանի Բաբայանի, Անժելա Անդրանիկի Նանագուլյանցի, Ռոբերտ Անտոնի Ղազարյանի, Արմեն Մամբրեյի Ավետիսյանի և Ռուստամ Մայիսի Դավթյանի բնակարանային գործերը: Ներկայացված գործերից թերի էր Արմեն Մամբրեյի Ավետիսյանի բնակարանային գործը: Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց Վայք համայնքի ղեկավարի գրությունը այն մասին, որ Արմեն Ավետիսյանը չնայած բազմաթիվ զգուշացումների չի ներկայացնում պահանջված փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող անօթևան 6 նախկին զիծառայողների գործերը ներկայացնել ՀՀ ՊՆ :

Հանձնաժողովի նախագահ
Քարտուղար



Մ.Հարությունյան
Յ.Բաբայան